ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ (1832-1906)

XIX դարը նշանաւորուեց գիտական մտքի վերելքով, որի արդիւնքում ձեւաւորուեցին եւ սկզբնաւորուեցին գիտական նոր ուղղութիւններ։ Դրանցից մէկն էր վիմագրագիտութիւնը՝ յուշարձանների որմերին պահպանուած հայատառ գրերի գրառումն ու վերծանութիւնը։ Պատմական Հայաստանի ողջ տարածքում պահպանուել են շինարարական, նուիրատուական, իրաւականոնական, յիշատակագրային բնոյթի աւելի քան տասը հազար արձանագրութիւն։ Վիմական արձանագրութիւններ են պահպանուել նաեւ հայրենիքից դուրս՝ գաղթօճախներում։ Որպէս հաւաստի պատմական աղբիւրներ՝ դրանք հարուստ տեղեկութիւններ են հաղորդում ժամանակի հասարակական յարաբերութիւնների մասին[1]։

Վիմագրերի հաւաքման, ուսումնասիրման գործընթացն իրականացնելու համար կարեւոր է ազգային, մշակութային եւ հոգեւոր գործիչ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսէս Աշտարակեցու դերը (1843-1857 թթ.), ով կարգադրել է հաւաքել Հայաստանում սփռուած պատմական յուշակոթողների վրայ փորագրուած «ամենայն ցիշատակագրութիւնս»[2]։

Արդիւնքում, Հայաստանի տարբեր բնակավայրերի պատմամշակութային կոթողներից ու խաչքարերից գրի առնուեցին հարիւրաւոր վկայագրեր։ XIX դարի կէսերին այդ գործում աննախադէպ ներդրում ունեցան տեղագիր-ճանապարհորդները՝ Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանը, Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալեանցը, Մինաս Վարդապետ Բժշկեանցը[3], Մկրտիչ Էմինը[4], Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանցը, Մակար Եպիսկոպոս Բարխուդարեանցը, Կարապետ Կոստանեանը, ինչպէս նաեւ Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեանցը[5] (յետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս), ազգագրագէտ Երուանդ Լալայեանը եւ ուրիշներ, ովքեր ծաւալեցին հայագիտական բեղուն գործունէութիւն։ Իւրօրինակ ներդրում ունեցաւ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Ղեւոնդ Ալիշանը, ով արդէն հրատարակուած եւ հայաստանեան թղթակիցներից իրեն ուղարկուած նորայայտ վիմագրերն ամբողջացնելով՝ ստեղծեց կարեւոր եւ մինչ օրս գիտական մեծ արժէք ունեցող ստուար հատորներ։

Տեղագիրներից է պատմաբան, ազգագրագէտ, բանասէր, մանկավարժ, գրող Մակար (Գէորգ) Եպիսկոպոս Բարխուդարեանցը, ով տարիների ընթացքում ձեռք բերեց

---

[1] **Ս. Բարխուդարեան**, Ն. Մառն ու վիմագրութիւնը, «Մառը եւ հայագիտութեան հարցերը», Երեւան, 1968, էջ 41։

[2] **Դիւան հայ վիմագրութեան** (այսուհետ՝ **ԴՀՎ**), Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելին, պրակ I, Հայկական վիմագրութիւն, Երեւան, 1966, էջ XVIII։

[3] **Մինաս Վրդ. Բժշկեան**, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830։

[4] **Н. О. Эмин,** Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, Москва, 1881.

[5] **Գ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, հատոր Գ, Նիւ Եորք, 1942/43, 248 էջ։

հարուստ կենսափորձ եւ հիմնարար գիտելիքներ։

Մակար Բարխուդարեանցը ծնուել է 1832 թ. Արցախի Խաչէն գաւառի Խանածախում (Խնածախ), որի ստուգաբանութեան վերաբերեալ պատմագրութեան մէջ կայ մի քանի տեսակէտ[6]։ Բնակավայրը յիշատակւում է Շուշի գաւառում[7]։ Այստեղ բնակիչները հաստատուել են 1686 թ. Սիւնեաց Խանածախ գիւղից[8], սակայն XVII դարի ձեռագրերից մէկում Խանածախը յիշատակւում է «Քաշթաղու» երկրում[9]։

Գրիգոր եւ Եղիսապէթ Բարխուդարեանցների ընտանիքում[10] մեծանում էր ութ երեխայ՝ Կարապետը, Ստեփանը, Գէորգը (Մակար Եպիսկոպոսը), Յակոբը, Անթառամը, Շահազատը, Հերիքնազը, Վարվառան։ Խանածախի Ս. Աստուածածին եկեղեցու յարակից գերեզմանատանը թաղուած են տոհմի ներկայացուցիչներից Մակարի պապը՝ Քեանդխուտա-Խաչատուրը, տատը՝ Մարիամը, հայրը՝ Գրիգորը, մայրը՝ Եղիսապէթը, Սարգիս, Թէոս եւ Մկրտիչ հօրեղբայրները, վաղաժամ մահացած եղբայրը՝ Ստեփանը։

Գիւղում դպրոց չլինելու պատճառով պատանի Գէորգը արհեստ ու գրաճանաչութիւն է սովորել Արցախում, իսկ 1862-1868 թթ. Երուսաղէմի Ժառանգաւորաց[11] վարժարանում՝ աշակերտելով վանքի միաբան եւ հոգեւոր վարժարանի տեսուչ Մելիքսեդեկ Արք. Մուրատեանի մօտ։ Յետագայում նա դարձել է Երուսաղէմի Ս. Յակոբ վանքի միաբան, ապա՝ վանքի հոգեւոր վարժարանի տեսուչ։ 1869 թ. Յունիսի 22-ին ձեռնադրուել է սարկաւագ, իսկ 1870 թ.՝ վարդապետ։ Վերադառնալով հայրենիք՝ 1875 թ. Մ. Բարխուդարեանցը ստանձնել է նախ Էջմիածնի տպարանի տեսուչի, իսկ 1876 թ.՝ Զմիւռնիայի առաջնորդական փոխանորդի պաշտօնը՝ միաժամանակ վարելով քարոզչի, լուսարարի[12] եւ հիւանդանոցի տեսուչների պաշտօնները։ 1880 թ. Գէորգ Դ Կաթողիկոսի (1866-1882 թթ.) կոնդակով դարձել է Մայր Աթոռի միաբան, իսկ 1892 թ. ստանձնել է Ալեքսանդրապոլի թեմի առաջնորդական փոխանորդի պաշտօնը։

1894 թ. Մ. Բարխուդարեանցը ձեռնադրուել է եպիսկոպոս, դարձել է Ս. Էջմիածնի Սինոդի անդամ[13]։ 1894-1896 թթ. նշանակուելով Շամախու հայոց թեմի հոգեւոր առաջ-

---

[6] Համաձայն յիշատակութեան իբր խաներից մէկը բնակավայրը ծախել է, որից էլ առաջացել է ԽԱՆԱԾԱԽ անուանումը։ Մէկ այլ տեսակէտի՝ թշնամին յարձակուել է տարածքի խանի վրայ, ով ասել է, թէ մի զաղ (բոյսի տեսակ է) էլ չի տայ, որից ել առաջացել է ԽԱՆԱԶԱՂ անունը։ Ոմանք էլ կապում են Խոնածախ այսինքն՝ խունկ ծախողների հետ։ Տե՛ս **Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան** (այսուհետ՝ **ՀՅՇՏԲ**) հ. 2, Երեւան, 1988, էջ 743։

[7] **Ա. Առաքելեան**, Մակար Եպս. Բարխուդարեան, Էջմիածին, 1974, Ը, էջ 66-74։ **Ի. Յարութիւնեան**, Մակար Եպս. Բարխուդարեանց, Ազգագրական հանդէս, Թիֆլիս, 1906, գիրք 13, էջ 227։

[8] **Մակար Եպս. Բարխուդարեանց**, Արցախ, Երեւան, 2018, էջ 153։

[9] **ՄՄ ձեռագիր 4281**, Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, 1647, Խանածախ, Քաշաթաղու երկիր։ Գրիչ՝ Մարիամ ապաշխարող, ստացող՝ գրչի հօրեղբայր՝ Մարկոս Եպիսկոպոս։ **Ձեռագիր 7840**, Աւետարան, 1693 թ., գրիչ՝ Եփրեմ Քահանայ, Խանածախ։

[10] **Մակար Եպս. Բարխուդարեանց**, Արցախ, Երեւան, 2018, էջ 154։

[11] Ժառանգաւորաց վարժարանը քառադաս էր։ Աշակերտները ստանում էին դպրութեան համապատասխան աստիճան։ Վարժարանի նպատակն էր կրթել միաբաններ, ովքեր կը նուիրուեն հայոց հաւատքին ու հոգեւոր կեանքին։ Տե՛ս **Մ. Օրմանեան**, Հայկական Երուսաղէմ, Երուսաղէմ, 1931, էջ 190-193։

[12] Լուսարարը եկեղեցական պաշտօնեայ է, ով հսկում է եկեղեցու ներքին բարեզարդութիւնը, կարգ ու կանոնը, մաքրութիւնը, լուսաւորութիւնը եւ այլն։ Տե՛ս **Հայերէն բացատրական բառարան** (այսուհետ՝ **ՀԲԲ**), հ. 2, Երեւան, 1944, էջ 215։

[13] Սինոդը բացուել 1837 թ. Յովհաննէս Ը Կարբեցի (1831-1842 թթ.) կաթողիկոսի կողմից։ Այն բաղկացած է Մայր Աթոռի միաբանութեան չորս եպիսկոպոսներից ու չորս վարդապետներից։ Հիմնականում կատարում էր եկեղեցավարչական ու տնտեսական գործառոյթ, հոգեւորականների դատական գործերը եւ այլն։ Գործել է մինչեւ 1917 թ.։ **Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան** (այսուհետ՝ **ՔՀ**), էջ 907-908։

նորդ՝ նա շրջագայել է պատմական Աղուանքում, Արցախ, Ուտիք, Փայտակարան նահանգներում՝ փնտրելով «թանկագին հարստութիւններ հայ պատմութեան համար»[14]։ Հաւաքած նիւթերի հիման վրայ նա շարադրել է պատմագիտական եւ աղբիւրագիտական արժէք ունեցող «Աղուանից երկիր եւ դրացիք»[15] եւ «Պատմութիւն Աղուանից»[16] ուսումնասիրութիւնները, որոնք առ այսօր օգտագործւում են նորագոյն շրջանի ուսումնասիրողների կողմից։ Մ. Բարխուդարեանցը փորձել է մանրամասն ուսումնասիրել երկրամասը, «բայց դարձեալ գիտութեամբ եւ անգիտութեամբ սխալներ շատ է արել, որոնց ուղղելը դարձեալ իրեն կը յանձնենք, որովհետեւ մենք ժամանակ չունէինք նրա գիրքը քննադատելու»[17]։ Թէեւ նման տեսակէտի գիրքն առ այսօր չի կորցրել իր արժէքը, իսկ Մ. Բարխուդարեանցի վերծանութիւնները ստացել են բացառիկ նշանակութիւն, քանի որ դրանց չնչին մասն է ուսումնասիրուել մինչեւ XX դարի 80-ական թթ. կէսերը։ Կարեւոր համարելով աղբիւրագիտական նիւթերի հաւաքումը՝ նա նշում էր, որ ամէն գաւառից նիւթերը պէտք է հաւաքեն գրագէտ մարդիկ եւ դրանք թողնել անփոփոխ, չպէտք է առաջնորդուել սեփական սկզբունքներով[18]։ Այդ առումով նա սիրում էր իր գործը եւ «ամբողջ հոգուով նուիրուած էր դրան՝ չնայելով իւր թերի ուսմանը եւ կարեւոր պատրաստութիւնից զուրկ լինելուն»[19]։

Մ. Բարխուդարեանցն ուսումնասիրել է նաեւ Արցախ նահանգն իր 24 գաւառների տեղադրութեամբ՝ օգտագործելով պատմական փաստերը, վիմագրերը, ձեռագիր յիշատակարանները, կաթողիկոսական կոնդակները, հրովարտակները։ Յատկապէս հարուստ է Արցախի վիմագրական ժառանգութիւնը. Մ. Բարխուդարեանցը գրառել է 405 վիմագիր, որից 165-ը պահպանուել է միայն իր յիշատակութեամբ։ Յաւելենք, որ նորագոյն շրջանի հրատարակութիւններում Արցախից գրառուած վիմագրերի թիւը հասնում է 1071-ի։ Ընդհանուր առմամբ Մ. Բարխուդարեանցի վիմագրական ժառանգութիւնում հաշուում է մօտ 550 վիմագիր, 32-ը՝ Տաւուշից (մեզ են հասել անաղարտ), 101-ը՝ Աղուանք աշխարհից (մի մասը ոչնչացուել էր մինչեւ XX դարի 80-ական թթ.), 405-ը՝ Արցախից (228-ը մեզ չեն հասել)։ Անշուշտ, Մ. Բարխուդարեանի վերծանութիւնները եւս զերծ չեն թերութիւններից, քանի որ XIX դարի 80-90-ական թթ. դեռ կիրառութիւն չունէին վիմագրերի գիտական վերծանութեան սկզբունքները, ուստի հեղինակը դրանք վերծանել է առանց տողանջատման՝ չյիշատակելով տողերի քանակը։ Երբեմն ժամանակի սղութեան կամ վիմագրի դժուարընթեռնելիութեան պատճառով արձանագրութեան ամբողջական տողեր դուրս են մնացել տեքստից, կամ էլ դրանք խմբագրել է իր հայեցողութեամբ։ Կան արձանագրութիւններ, որոնք դուրս են մնացել նրա ուսումնասիրման շրջանակներից, որը պայմանաւորուած էր մի շարք հանգամանքներով. է՛ւ խստաշունչ կլիման, է՛ւ յուշարձանների կիսաւեր վիճակը, է՛ւ ճանապարհների բացակայութիւնը դժուարացնում էին դրանց ուսումնասիրումը։

Մ. Բարխուդարեանցը զբաղուել է նաեւ գրականութեամբ։ Գրական մի քանի աշխատանքներում հանդէս է գալիս «ուստա Գէորգ Բարխուդարեան» անուամբ։ Մեզ է հա-

---

[14] **Մ. Բարխուդարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք (վերահրատարակութիւն), Երեւան, 1999, էջ Ա։

[15] **Մ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, Թիֆլիս, 1893, 303 էջ։

[16] **Մ. Բարխուդարեանց**, Պատմութիւն Աղուանից, հատոր Ա, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1902, 224 էջ։ Պատմութիւն Աղուանից, հատոր Բ, Թիֆլիս, 1907, 192 էջ։

[17] **Մ. Սմբատեանց**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի, Տփղիս, 1896, էջ ԺԱ-ԺԲ։

[18] **Արարատ**, 1887, թիւ 26, էջ 382-385

[19] **Ի. Յարութիւնեան**, նշ. աշխ., էջ 227։

սել նաեւ նրա հեղինակած կրօնական գործերը[20], գեղարուեստական ստեղծագործութիւնները[21], որոնցից մի քանիսը գրուած են Ղարաբաղի բարբառով։ Ըստ նրա՝ գրականութեան մէջ կայ երկու ուղղութիւն, առաջինը մեծ կարեւորութիւն է տալիս անցեալին ու պատմական հնութիւններին, իսկ միւսն ապրում է նորով, սակայն փորձում է ուսումնասիրել անցեալում եղած երեւոյթները։ Մեծ տեղ տալով հէքեաթներին՝ նա նշում էր, որ հէքեաթը պէտք է ներկայացնել այնպէս, ինչպէս գրի է առնուել։ Հէքեաթը երեւակայութեան արդիւնք է, որը ժամանակի ընթացքում ենթարկուել է ներքին եւ արտաքին փոփոխութիւնների։ Հէքեաթ հաւաքելը պահանջում է մեծ հմտութիւն եւ պատրաստակամութիւն[22]։ Մ. Բարխուդարեանցը նշում է, որ բանահիւսութիւնը ստեղծում է ժողովուրդը հազարամեակների ընթացքում։ Դրա զարգացմանը նպաստում են բարբառները, որոնք էլ աւելի են հարստացնում այն։ Նմանօրինակ ժառանգութիւն կարելի է համարել Պըլը-Պուղու 189 զուարճախօսութիւնները, որոնք Ղարաբաղի բարբառով առաջինը գրառել է Մ. Բարխուդարեանցը[23]։ Պըլը-Պուղին (իրական անունը Պօղոս, իսկ Պէլ նշանակում է գիժ, խենթուկ, ապուշ[24], 1731-1810 թթ.), ծնունդով Վարանդայի Աւետարանոց գիւղից էր, թէեւ անգրագէտ էր, սակայն անսահման նուիրուած էր իր հովանաւորին՝ Մելիք Շահնազարին։

1886 թ. տպագրում է Մակար Եպիսկոպոսի պատմագեղարուեստական մէկ այլ ուսումնասիրութիւն «Գաղտնիք Ղարաբաղի» գիրքը, որտեղ ներկայացում է Արցախի պատմութիւնը։ Ժամանակին այն դարձել է «հետաքրքրական գրական վիճաբանութեան առարկայ»[25], քանի որ գրքում տեղ գտած փաստերն ու իրադարձութիւնները քիչ չափազանցուած են[26]։

Մ. Բարխուդարեանցը զբաղուել է նաեւ մանկավարժական գործունէութեամբ։ 1881-1882 թթ. նա աստուածաբանութիւն է դասաւանդել Շուշիի ռէալական եւ թեմական դպրոցներում։ Շամախու թեմի առաջնորդ Մեսրոպ Արք. Սմբատեանցը, ջերմ կապեր ունենալով Մակար Բարխուդարեանցի հետ, նրան առաջարկել է թեմի Սաղիանի վանական դպրոցի տեսուչի եւ կրօնի ուսուցչի պաշտօնը[27]։ Յետագայում, 1888 թ. Մակար Ա կաթողիկոսի (1885-1891 թթ.) կոնդակով նա նշանակուել է թեմի Սաղիանի վանքի վանահայր եւ երկդասեայ վանական դպրոցի տեսուչ՝ «ազգային այս կարեւոր գործը

---

20 **Մ. Բարխուդարեանց**, Քրիստոնէական վարդապետութիւն, Քննադատութիւն քննադատութեանց, Տփղիս, 1888: Նախապաշարմունք, Աստուածային հրահանգ հանրապարտուց, Թիֆլիս, 1902: Մատչելի բառոզներ հայ ժողովրդականաց կարդալու համար, Բ. տետրակ, Վաղարշապատ, 1901:

21 **Մ. Բարխուդարեանց**, Միրզա եւ Աննա, Զմիտնիա, 1876: Արազը տարին կտարի, Շուշի, 1883: Զոբանն ու նըշանածը, Թիֆլիս, 1896: Զնաշխարհիկ տղայ, Շուշի, 1886: Բարոյական առածներ, Թիֆլիս, 1898:

22 Արձագանք, 1884, թիւ 21, 321-323:

23 **ՀՍՀ**, հատոր 9, էջ 288: Միջնադարում արեւելեան մի շարք երկրներում իշխաններն ունէին խեղկատակներ, ծաղրածուներ, որոնց «խօսքը լի էր խելքով ու բարոյականութիւնով եւ հասարակութիւնը բերնէ բերան եւ որդից որդի» փոխանցում էր նրանց խօսքն ու զրոյցը: Յետագայում այդ սովորութիւնը տեղափոխուեց Արեւմուտք: Հայոց Արշակ Բ արքան ունէր Յոհան անունով խեղկատակ, ով զուարճացնում էր թագաւորին, եւ վերջինս «գիւղեր էր ընծայում անվայել ծաղրածուին»: Ընտանեկան հաւաքոյթների ժամանակ հրաւիրում էին խեղկատակի, որին Թիֆլիսում անուանում էին եավայ, խօշտաբշի, մազալու, եարամազ, հանաքշի, մասխարայ, լօթի եւ այլն: **Արձագանք**, 1883, թիւ 13, էջ 178-180: **Մ. Բարխուդարեանց**, Պըլը-Պուղի, Թիֆլիս, 1883: «Պըլը Պուղի», Մակար Բարխուդարեանց, Վաղարշապատ, 1904:

24 **ՀԲԲ**, հատոր IV, Երեւան, 1945, էջ 92:

25 **Ի. Յարութիւնեան**, նշ. աշխ., էջ 228:

26 **Լէօ**, Վէպ, թէ պատմութիւն, Շուշի, 1887, էջ 116:

27 **ՀԱԱ**, ֆոնտ 429, ցուցակ 1, գործ 78, Տեղեկութիւններ՝ Սաղիանի Ս. Ստեփաննոս եւ Մէյսարի Ս. Աստուածածին վանքերի մասին, թերթ 32: **Մ. Սմբատեանց**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի, էջ 103:

յառաջ տանելոյ»[28]։

Մակար Եպիսկոպոս Բարխուդարեանցն աշխատակցել է զանազան թերթերում եւ մահուանից յետոյ շատ անտիպ կարեւոր աշխատութիւններ է թողել[29]։ Ժամանակակիցները նրան բնութագրել են իբրեւ բարի, հեզահամբոյր, խոնարհ, ներողամիտ, առաքինի, «ջերմ հաւատացող քրիստոնեայ, անշահասէր, անկաշառ»[30]։ Իր համեստ դրամական կարողութիւնը 3000 ռուբլու չափով կտակել է ազգային կազմակերպութիւններին։

Իր կեանքի վերջում Մ. Բարխուդարեանցը հրաժարուել է Էջմիածնի Սինոդի անդամութիւնից՝ ցանկանալով ճգնել Ագուլիսի Ս. Թովմա վանքում։ Սակայն 1906 թ. փետրուարի 6-ին նա մահացել է Էջմիածնում, իսկ աճիւնն ամփոփուել է Էջմիածնի Մայր Աթոռին կից միաբանական գերեզմանատանը։ Տապանաքարին համեստ արձանագրութիւն կայ, 4 տող[31]։

ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈ/ՊՈՍ ԲԱՐԽՈՒԴԱՐ/ԵԱՆ ԽՆԱԾԱԽՑԻ/ 1834-1906 ԹԹ.

Մակար Եպիսկոպոս Բարխուդարեանցը մինչեւ իր կեանքի վերջը հաւատարիմ մնաց իր ազգին եւ հայրենիքին, «որոնց շահերի, փառքի ու պատուի համար՝ ըստ չափու կարողութեան կէս դարուց աւելի, աշխատել է, տանջուել է, քարոզել է»[32]։

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԴԱՄԵԱՆ
Պատմ. գիտ. թեկ., ՀՀ ԳԱԱ ՀԱԻ գիտաշխատող



[28] **Մ. Սմբատեանց**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի, էջ 19։

[29] **Ա. Բէկ-Յովսէփեան**, Մակար Եպս. Բարխուդարեան, Գեղունի, 1906, էջ 1-10, էջ 63։ Ցաւօք, Մ. Բարխուդարեանցի արխիւային նիւթերի գտնուելու վայրի մասին տեղեկութիւններ չունենք։

[30] Նոյն տեղում։

[31] Մակար Բարխուդարեանցի կենսագրութեանը նուիրուած յօդուածներում նրա ծննդեան թիւը յիշատակւում է 1832 թ., սակայն տապանագրի վրայ նշուած է 1834 թ.։ Տե՛ս՝ **Ա. Յարութիւնեան**, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրութիւնները, Ս. Էջմիածին, 2016, էջ 234, արձ. 500։

[32] **Ա. Բէկ-Յովսէփեան**, նշ. աշխ., էջ 63։